ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԵՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ս. ՄԱՐԿՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս.

Ուրախությամբ տեղեկացանք Եգիպտոսի հայոց առաջնորդարանից, որ տոնախմբվելու է Ձերդ Սրբության 30-ամյա հոբելյանը:

Այս գեղեցիկ առիթով ողջունում ենք Ձեզ եղբայրական սիրո ողջույնով՝ նախ որպես պատրիարքական Աթոռի գահակալի, ով իր անխոնջ նվիրումով բարձրացրեց Ս. Աթոռի վարկը, ապա՝ իբրև քաջ հովվի, որը սիրեց իր հոտը և սիրվեց նրանից:

Հանձին Ձերդ Սրբության, ողջունում ենք իմաստուն անապատականին, որն իր խոսքի հմայքով արթուն պահեց իր զավակների հավատքն առ Աստված և հավատարմությունն իր Եկեղեցու հանդեպ:

Ձեր օրինակով խանդավառ բազում հավատացյալներ ինքնընծայվեցին վանական կյանքին և ծաղկեցրեցին անապատն իրենց աղոթքով ու փառաբանությամբ:

Ողջունում ենք նաև Ձերդ Սրբությանը, ով իր քարոզությամբ կենդանի պահեց ղպտի հավատացյալի կապը քրիստոնեական դարավոր իր ավանդույթների հետ:

Հանձին Ձեզ ողջունում ենք նաև ճանաչված աստվածաբանին, ով դրոշակակիրներից մեկը եղավ Արևելյան Եկեղեցիների քաջության, դժվարությունների և փորձություններին ընդդեմ կենալու հանձնառության: Ձեր առատահոս խոսքը քաջալերեց, մեկնեց, ուսուցանեց ու ջատագովեց ամեն անգամ, երբ պահանջը զգացվեց:

Հուսով առ Աստված, որ Տերն ապավենն է ամենքիս, Դուք ամբողջական նվիրվածությամբ ու քաջեռանդությամբ լծվեցիք Բանին Կենաց քարոզությանն այս դժվարին ժամանակներում:

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս, առանձնակի ուրախությամբ և գոհունակությամբ ենք հիշատակում, որ Դուք Կահիրեի սրտում բարձրացրիք հոյակերտ տաճար հանուն Եգիպտոսի առաքյալ և Ալեքսանդրիայի Աթոռի հիմնադիր Սուրբ Մարկոսի՝ զորացնելով Ձեր ժողովրդի բարեպաշտությունն ու առ Աստված ապավինությունը: Մենք մշտապես պիտի հիշենք խուռներամ հավատացյալների սիրո, հարգանքի ու ջերմեռանդության պոռթկումը Սուրբ Մարկոսի տաճարում:

Աղոթում ենք առ Աստված, որ երկար ու ապահով լինի Ձեր ընթացքը Տիրոջ այգում, և մաղթում, որ ծառայական Ձեր ուխտը արդյունավորվի նորանոր իրագործումներով ի փառս Աստուծո և ի պայծառություն Ընդհանրական Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Սիրո ողջունիվ և աղոթակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 նոյեմբերի 2001 թ.